ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 156 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 219-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 21-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Կենսաբազմազանության պահպանության և բնապահպանական կրթության ազգային կենտրոն» ծրագրի մասին» N 219-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կարեն Սաֆարյան Հրաչիկի» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 47848275) 2026 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 26-05-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 3,083,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վաչիկ Սաֆարյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 46413156) 2026 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 26-06-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

ավտոմեքենայի բնական գազի ձեռքբերում՝ 916,666.67 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Տորնադո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00024444) 2026 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 02-26-Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 16,666,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ